# ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԱՐՑԵՐԸ

- Հայցի հարուցումը.
- Գործին մասնակցող անձանց կազմը.
- Գործը դատաքննության նախապատրաստելու նշանակությունը, խնդիրները և նպատակը.
- Գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում կատարվող գործողությունները.

# ՀԱՅՑԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ.

Հայցադիմումը վարույթ ընդունելու և դրանում առկա անհստակությունները դատաքննության նախապատրաստելու փուլում շտկելու դատարանի պարտականությունը՝ անձի դատարան դիմելու և դատարանի մատչելիության իրավունքների ապահովման տեսակետից:

Բանկի կողմից ներկայացվել է հայցադիմում՝ գումարի բռնագանձման պահանջի մասին: Մասնավորապես Բանկը պահանջել է բռնագանձել 970 000 ՀՀ դրամ, որից 500 000 ՀՀ դրամը վարկային պայմանագրով նախատեսված վարկի մայր գումարը, 300 000 ՀՀ դրամ չվճարված տոկոսները և 170 000 ՀՀ դրամ վարկային պայմանագրով սահմանված տույժերը:

# ՄԻԵՂ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

Ներպետական դատավարական կարգի համաձայն հնարավոր է, որ դիմողից պահանջվի հայցը կամ գանգատը, այդ թվում՝ փաստական հիմքերն ու իրավական փաստարկները գրավոր ներկայացնել՝ ըստ տրված ձևանմուշի: Այդուհանդերձ, այս պահանջը չպետք է հանգեցնի ծայրահեղ ֆորմալիզմի, և հարկ է, որ **ներպետական դատարանները սեփական նախաձեռնությամբ գործի հանգամանքների որոշակի ուսումնասիրություն կատարեն՝ դիմողի փաստարկներն ըստ էության** proprio motu **կարգով գնահատելու համար, նույնիսկ եթե դրանք ձևակերպված չեն եղել բացարձակ պարզորոշ կամ ճշգրիտ կերպով** (Դաթելը (No2. ընդդեմ Լյուքսեմբուրգի (Dattel) (No2) v. Luxembour, պարագրաֆ 36-77)

# ԳՈՐԾԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿԱՉՄԸ

1) **կողմերը.**
2) **երրորդ անձինք.**
3) **դիմողները**

# ՎԵՃԻ ԱՌԱՐԿԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻՆՔ

**Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձինք կարող են գործի մեջ մտնել դիմումի հիման վրա, <u>եթե նույնն է վեճի առարկան:</u>**

# ԳՈՐԾԸ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ

- վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա օրենսդրությունը որոշելը,
- դատավարության մասնակիցների կազմը ճշտելը և նրանց մասնակցությունն ապահովելը
- գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները (ապացուցման առարկան) որոշելը,
- ապացույցների բավարար համակցության ձևավորումը (ապացույցների կենտրոնացումը) ապահովելը:

# ԳՈՐԾԸ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ.

- ապացուցում պահանջող փաստերի շրջանակը որոշելը և ապացուցման պարտականությունը կողմերի միջև բաշխելը (ապացույցների բավարար համակցության ձևավորումը)
- ապացույցներ ներկայացնելու հնարավորությունը ապահովելու անհրաժեշտությունը և ապացուցման պարտականությունը կողմի վրա չդնելու դատավարական հետևանքները:

# ԳՈՐԾԸ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼԸ ՀԱՏՈՒԿ ՎԱՐՈՒՅԹԻ ԳՈՐԾԵՐՈՎ

- ապացուցում պահանջող փաստերի քննարկում
- հայցի ապահովում
- ապացուցման բեռի բաշխում

# ՀԱՅՑԻ ՀԻՄՔ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ (ՏԵՍՈՒՆՉԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ)

- Հայցի հիմքը՝
  - ✔ փաստական հիմք՝ իրավաբանական փաստեր
  - ✔ իրավական հիմք՝ իրավական նորմեր, որոնք կարգավորում են իրավահարաբերությունը (որը նշելու դեպքում առաջ է գալիս այդ հիմքից բխող փաստական հանգամանքները նշելու պարտականություն)
- Հայցի առարկան՝ նյութաիրավական պահանջ
- Հայցի օբյեկտը

ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագիծ

**Գործի նոր քննության ժամանակ հայցի առարկան և հիմքը փոխելու արգելք:**

# ՀԱՅՑԻ ՀԻՄՔԻ ՈՐՈՇՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՐՈՇԱԿԻՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

- *ՀՀ քաղ.դատ օր.109-րդ հոդվածի 2-րդ կետ՝*
- *Դատարանը կարճում է գործի վարույթը, <u>եթե՝ նույն անձանց միջև, նույն առարկայի մասին **միևնույն հիմքերով** վեճի</u> վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, բացառությամբ սույն օրենսգրքի 110 հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքի.*
- *արդյոք հայցի հիմքում դրված ապացույցի ներկայացումը նոր հայցով կարող է համարվել այլ հիմքով հայցի ներկայացում:*

# ԱՊԱՑՈՒՅՑԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Այն իրավաբանական փաստերի շրջանակը, որոնք էական նշանակություն ունեն գործի լուծման համար և ենթակա են պարզման գործի քննության ընթացքում:

# ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Ապացուցման առարկան որոշելիս Դատարանի կողմից հաշվի են առնվում՝

- հայցի կամ դրա դեմ բերվող առարկությունների հիմքում ընկած փաստերը
- վիճելի իրավահարաբերությունը կարգավորող իրավանորմում մատնանշված փաստերը

# ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԿԱՆՈՆՆԵՐԸ

- Ընդհանուր կանոն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը (ՀՀ քաղ.դատ.օր. 48-րդ հոդված)
- Հատուկ կանոն՝ ապացուցման պարտականությունը բաշխումը օրենքով սահմանված կարգով:

**ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով աշխատողին չվճարված գումարների վերաբերյալ գործերով ապացուցման պարտականությունը բաշխելու հարցին, գտել է, որ տվյալ դեպքում գումարը վճարված լինելու ապացուցման պարտականությունը կրում է գործատուն, քանի որ միայն գործատուն կարող է ներկայացնել համապատասխան ապացույց:**

# ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 48-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 7-ՐԴ ՄԱՍ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Կողմերն իրավունք չունեն ոչնչացնելու կամ թաքցնելու որևէ ապացույց կամ այլ եղանակով խոչընդոտելու դրա հետազոտմանը և գնահատմանը՝ դատավարության մյուս կողմի համար անհնարին կամ դժվարին դարձնելով ապացույցներ հավաքելը և ներկայացնելը: Նման փաստերի առկայության դեպքում դատարանը խոչընդոտող կողմի վրա է դնում հակառակը ապացուցելու պարտականությունը (օրինակ՝ փորձաքննության նշանակման ելակետային տվյալները պատասխանողի մետ գտվելու դեպքում)

# ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՐՈՇԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՇԽԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Օրինակ՝ Նեգատոր հայցի դեպքում ապացուցման առարկան են կազմում՝

նեգատոր հայցերի ապացուցման առարկան կազմող փաստերն են՝

- հայցվորը հայցի հարուցման պահին պետք է լինի գույքի սեփականատեր կամ այլ օրինական (տիտղոսային) տիրապետող,
- հայցի ներկայացման պահին պետք է առկա լինի երրորդ անձի կողմից թույլ տրված այնպիսի գործողություն կամ անգործություն, որը խոչընդոտի գույքի սեփականտիրոջը կամ օրինական (տիտղոսային) այլ տիրապետողին օգտագործել և/կամ տնօրինել գույքը)
- **գույքի օգտագործմանը և/կամ տիրապետմանը խոչընդոտող գործողության կամ անգործության իրավական լինելու փաստը:**

# ՇԻՆՃՈՒ ԳՈՐԾԱՐՔԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ԱՊԱՅՈՒՅՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՐՈՇԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՒ ԱՊԱՅՈՒՅՄԱՆ ԲԵՌԻ ԲԱԺԽՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴՐԻ

- *օրենքով սահմանված ձևին համապատասխանող գործարքի առկայությունը.*
- *այդ գործարքը վիճարկելու իրավունք ունենալը (շահագրգիռ անձ հանդիսանալը).*
- *գործարքը կնքելիս կողմերի իրական կամարտահայտությունը .*
- *վիճարկվող գործարքում նշված քաղաքացիական իրավահարաբերություններից տարբերվող՝ իրականում այլ քաղաքացիական իրավահարաբերությունների առկայությունը.*
- *կողմերի միջև իրականում առկա քաղաքացիական իրավահարաբերությունները վիճարկվող գործարքով քողարկելու նպատակի առկայությունը:*

# ԱՊԱՑՈՒՅՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԿԱՆՈՆՆԵՐ: ՔՆՆԱՐԿՈՒՄ

Օրինակ՝ կնքվել է վարձակալության պայմանագիր, որի համաձայն՝ վարձակալության վճարը սահմանվում է ամսեկան 150.000 ՀՀ դրամ: Վճարումը կատարվում է կանխիկ եղանակով՝ մինչև տվյալ ամսվա վերջին օրացույցային օրը: Վարձատուն հայց է ներկայացնում դատարան՝ պահանջելով բռնագանձել չվճարված վարձավճարի գումարները: Վարձակալը առարկում է հայցի դեմ՝ նշելով, որ իր կողմից պատշաճ կերպով կատարվել է վարձակալության վճարը վճարելու պարտականությունը, ինքը պարտք չունի:

Ներկայացվել է X հոդվածում հրապարակված տեղեկությունները որպես զրպարտություն հերքելուն պարտավորեցնելու պահանջ: Պատասխանողն առարկել է ներկայացված պահանջի դեմ և նշել է, որ հայցվորը չի ներկայացրել որևէ ապացույց այն մասին, որ հրապարակված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը:

- **Գործին մասնակցող անձի վկայակոչած փաստը ժխտող անձի (հասարակ ժխտում)վրա չի կարող դրվել ժխտումն ապացուցելու պարտականություն:**

# ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ՝

Ա-ի կողմից փաստաբան չհանդիսացող Բ-ին (Բ-ն Ա-ի ոչ հարազատ եզբայրն է) տրվել է հասարակ գրավոր ձևով կազմված լիազորագիր դատարանում որպես ներկայացուցիչ հանդես գալու համար: Ա-ի կողից Բ-ին տրված դատարանում գործը վարելու լիազորագրում ներկայացուցչին իրավունք է տրվել այլ անձի փոխանցելու լիազորագրով իրեն տրված լիազորությունները: Բ-ն իր հերթին կազմել է լիազորագիր և Ա-ի կողմից իրեն տրված լիազորությունները փոխանցել է փաստաբան հանդիսացող Գ-ին ևս հասարակ գրավոր ձևով կազմված լիազորագրով: Արդյոք Ա-ի կողից Բ-ին և Բ-ի կողմից Գ-ին տրված լիազորագրերը կազմվել են օրենքի պահանջների պահպանմամբ:

# ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ

- լիազորությունների ստուգում (ներկայացուցչությունը դատարանում)՝
- Ներկայացուցչի և ներկայացվողի ազգակցական կապի պարզումը
- Օրինական ներկայացուցիչներ
- Իրավաբանական անձի, ինչպես նաև իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնող կազմակերպության շահերի ներկայացումը
- Դատական ներկայացուցչությունը իրավաբանական խորհրդատվություն և օգնություն մատուցող իրավաբանական անձանց կողմից
- վերալիազորում

# ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՌԿԱ ԼԻՆԵԼ ԲԱՑԱՌԱՊԵՍ ԼԻԱԶՈՐԱԳՐՈՒՄ ՆՇՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

- Ստորագրելու հայցադիմումը,
- Գործը հանձնելու արբիտրաժային տրիբունալին,
- Ամբողջովին կամ մասնակի հրաժարվեկու հայցային պահանջներից և ընդունելու հայցը,
- Փոխելու հայցի առարկան կամ դրա հիմքը,
- Փոխելու հայցային պահանջների չափը,
- Կնքելու հաշտության համաձայնություն,
- Այլ անձի փոխանցելու լիազորությունները (վերալիազորում),
- Բողոքարկելու դատական ակտը:

# ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՄԻԱՅՆ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԻՋՈՑՈՎ

- դատական ներկայացուցչության իրականացումը որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն.
- դատական ներկայացուցչության իրականացումը որպես ոչ պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն.